

5.5. 2005թ. մայիս ամսվա հիդրոօդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, մայիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը հիմնականում եղել է նորմայի սահմաններում: Լոռիում, Սյունիքի նախալեռներում և լեռնային առանձին շրջաններում այն նորմայից բարձր է եղել 1 աստիճանով, իսկ Արարատյան դաշտում՝ նույնքան ցածր:

Օրական միջին ջերմաստիճանը մայիսի 1-2-ին, 8-ին, 11-13-ին և 23-30-ին նորմայից բարձր է եղել 1-4 աստիճանով:

Առավելագույն ջերմաստիճան գրանցվել է մայիսի 22-30-ին: Սյունիքի հովիտներում այն կազմել է $+28$ $+32^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում՝ $+27$ $+30^{\circ}\text{C}$, Լոռիում, Սյունիքի նախալեռներում, Տավուշում՝ $+23$ $+26^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+18$ $+22^{\circ}\text{C}$: Գրանցված առավելագույն ջերմաստիճանները մոտ են եղել տվյալ օրերի երբևէ գրանցված բացարձակ արժեքներին (Աշտարակում /Արագածոտնի մարզ/ ամսի 29-ին գրանցված առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է տվյալ օրվա երբևէ գրանցված բացարձակ արժեքը):

Մայիսի 3-6-ին օդի ջերմաստիճանը նվազել է 5-7 աստիճանով, և օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 3-6 աստիճանով: Այդ օրերին նվազագույն ջերմաստիճանը լեռնային առանձին շրջաններում և Լոռիում գրանցվել է 0 -4°C , Տավուշում՝ 0 $+6^{\circ}\text{C}$, Սյունիքի նախալեռներում՝ $+2$ $+6^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ $+5$ $+8^{\circ}\text{C}$: Օդի օրական միջին ջերմաստիճանը 2-4 աստիճանով ցածր է եղել նորմայից նաև ամսի 10-11-ին և 14-21-ին:

Մայիսի 1-ին, 6-7-ին, 10-11-ին և 21-23-ին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Շիրակում, Տավուշում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքում և Արագածոտնում ամսական տեղումների քանակը կազմել է նորմայի 100-120%-ը, Սյունիքում՝ 120-160% (բացառությամբ Սիսիանի՝ 203%-ը), Վայոց ձորում, Արարատյան դաշտում և նրա նախալեռներում՝ 110-140% (բացառությամբ Թալինի՝ 90% և Արարատի՝ 98%):

Մայիսի 12-ին՝ Շիրակում, 24-ին և 28-ին՝ Տավուշում, 30-ին՝ Վայոց ձորում, 31-ին՝ Տաշիրում (Լոռու մարզ) դիտվել է կարկուտ, տրամագիծը՝ 10-30 մմ: Մայիսի 29-ին Կապանի վաչագան գյուղում (Սյունիքի մարզ) ուժեղ անձրևի հետևանքով դիտվել է սելավ, որի հետևանքով զոհվել է 2 մարդ:

Մայիսի 1-2-ին, 8-9-ին, 12-ին, 17-ին և 29-ին Լոռիում, Արարատյան դաշտում, Ապարանում (Արագածոտնի մարզ) դիտվել է քանու ուժգնացում, արագությունը՝ 14-24 մ/վրկ, պոռթկումները՝ 29 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-120%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 23 սմ-ով և 2005թ. մայիսի 31-ի դրությամբ կազմել 1898.20 մ, որը 2004թ. նույն օրվա համեմատ բարձր է 43 սմ-ով: